ՎԵՐԱԴԱՐՁԵ՛Ք, ՀԱԴՐՈՒԹՑԻՆԵՐ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հարգելի հայրենակից, դու ապրում ես (քեզ դու-ով եմ դիմում հարազատի իրավունքով) քո հարազատ ծննդավայրից հարյուրավոր կիլոմետր հեռավորության վրա։ Բայց չնայած այդ տարածությանը, հավատացած եմ, որ քո մեջ ամեն օր ու ամեն ժամ ապրում է կուսական անտառներով ու երփներանգ ծաղիկներով ծածկված, զմրուխտե կանաչի մեջ թաղված քո հարազատ Դիզակի՝ Հադրութի շրջանի, նրա հազարամյա սոսիների, անմահական ջրով «Խորն աղբյուրի», Դիզափայտի ու Սահունասարի, Կատարո վանքի ու Գտչավանքի, մի խոսքով՝ քո ծննդավայրի հանդեպ ունեցած անմարելի կարոտը։

Չհիշել մանկության արահետները, պատանեկությունդ, համոզված եմ, չես կարող։ Չընհիշել քո երջանիկ ներկայի համար նահատակված հայրենակիցներիդ հիշատակին կանգնեցված հուշարձանը՝ մեր ժամանակակիցների նորօրյա սրբավայրը, քո պապերի, նախապապերի աղոթարան փոքրիկ եկեղեցին, չես կարող։ Մի՞թե հնարավոր է մոռանալ քեզ աշխարհն ընկալելու ընդունակություն ներարկած դպրոցը, որոնցից առաջինը շրջանում հիմնադրվել էր նախկին վեհաշուք Ցորում Մեծն Մաշտոցի կողմից և որոնցից շատերն այսօր փակվել են և փակվում են միայն նրա համար, որ դու և քեզ նման շատ-շատերը լքել եք հայրենին՝ այնտեղ թողնելով ձեր ու միայնակ ծնողներին։ Նրանց կողքին մեռնում են Ցորի, Ծամձորի, Խծաբերդի, Դուդուկչիի, Մոխրենեսի, Ջրակուսի դպրոցները։ Որդեկորույս մոր ողբ է հիշեցնում թանգարանային ցուցանմուշներ դարձած Մյուլքուդարայի, Մելիքջանլուի, Քարագլխի, Սարեն շենի, Խրմանջուղի դպրոցական զանգերի ղողանջը։ Ո՞նց կարելի է մոռանալ հայրենի օջախը, ծնողներին։ Դու հեռվում ես, չգիտես, որ նրանք օգնության կարիք են զգում։

Ցավալի է, որ այսօր այդ մատունքներն իրենց մեջ անթեղած օջախներից շատերի միայն ավերակներն են մնում, որ հիշեցնում է մորդ երկինք կարկառած դողդոջուն ձեռքերը, բողոքը՝ ճակատագրի դեմ։

Հավատացած եմ, որ այդ ամենի, գուցե նաև ամեն քար ու թփի, ամեն ծառ ու առվի կարոտը ոչ միայն չի մարում քո մեջ, այլ ամեն օր աճագնանում է։ Թերևս դա է պատճառը, որ ժամանակ առ ժամանակ դու այցելում ես գյուղ, վայելում նրա բարիքները, երջանիկ անդորրը և էլ ավելի բորբոքված կարոտով նորից վերադառնում քո աղմկոտ քաղաքը, աչքերիդ մեջ տանելով հայրենի բնության հրաշալիքները, կամ գուցե կործանվող գյուղի ավերակների պատկերը։

Բայց մինչև ե՞րբ։ Մինչև երբ պետք է ապրես «հացիվ»։ Բավ է, սիրելիս։ Բավ է օտարության մեջ դեգերես։ Մի՞թե քիչ են դեգերել քո նախնիները։ Մի՞թե քիչ են նրանք հիմնադրել իրենց նոր բնակավայրերը՝ նախկին պատկերով ու նախկին անունով, միայն «նոր» նախդիրով՝ Նոր Արեշ, Նոր Բայազետ, Նոր Նախիջևան։ Երեկ նախնյացդ իր տուն ու տեղից, իր հայրենիքից զրկել է հազարամյա բարբարոս ու արյունարբու թշնամին։ Իսկ այսօր ի՞նչ «ներքին թշնամի է», որ քեզ պարտադրում է հեռանալ քո հայրական օջախից, լքել պապերիդ գերեզմանները, ապրել այլ ափերում և անտարբերությամբ սպասել, թե երբ վերջնականապես նրան կտիրեն օտարները։ Այն գիտակցությունը, որ դու պետք ես հայրենակիցներիդ, ինչ-որ գործ ես կատարում ի բարօրություն նրանց, հոգիդ մեծագույն բերկրանքով է լցնում։ Ուրեմն արի։ Ուրեմն վերադարձիր և շենացրու հայրենի գյուղդ։ Գիտեմ, հանգամանքների բերումով բոլորը չէ, որ կարող են վերադառնալ, բայց դու, եթե աշխատում ես գործարանում ու ֆաբրիկայում, դպրոցում կամ գյուղատնտեսության մեջ, եթե ապրում ես հանրակացարանում կամ վարձով տանը, եթե մասնագիտությունդ ու աշխատանքիդ բնույթը չեն խանգարում քեզ, ինչո՞ւ չվերադառնաս։ Բոլոր վերադարձողներիդ համար այստեղ աշխատանք, կենսական նվազագույն պայմաններ կգտնվեն։ Նոր տուն կառուցողներին, հայրական տներ վերանորոգողներին կտրամադրվեն հողամաս և շինանյութեր, ցանկացողներին՝ անասուններ և գյուղատնտեսական գործիքներ։ Այժմ մայր հայրենիքի օգնությամբ շրջանում իրագործվող Տրախտիկ-Խծաբերդ մայրուղու կառուցումը, կոնդենսատորների գործարանի, Հայճենապակու և շրջանի տարբեր գյուղերում հիմնադրվող Հայաստանի շատ գործարանների մասնաճյուղերի բացումը, նոր կոոպերատիվների ստեղծումը նույնպես հնարավորություն կտան տեղավորվել աշխատանքի։ Ծուրջ 14 ամիս է, ինչ քո հայրենակիցները, ողջ հայ ժողովուրդը ոտքի են ելել վճռելու Արցախ աշխարհը մայր Հայաստանին վերամիավորելու հարցը։ Եթե երեկ պայքարի ձևերը միտինգները, գործադուլները, դասադուլները, վերադաս կուսակցական և խորհրդային մարմիններին բողոքի նամակների ու հեռագրերի առաքումն էր, ապա այսօր դրանց գումարվել է պայքարի մի ձև ևս, ես կասեի ամենաարդյունավետը՝ արցախական աշխարհը հայաշատ դարձնելը և շենացնելը։ Այսօր Հայաստանից և մեր երկրի տարբեր վայրերից շատերն են գալիս Դիզակ և նրա գյուղերը։ Նրանց շնորհիվ արդեն սկսվել է քանիցս թշնամիների կողմից հրո ճարակ դարձած ու վերջնականապես դատարկված Բինյաթլուի վերաբնակեցումը։ Հայաստանից եկած բազմաթիվ մասնագետներ աշխատում են Մամեդաձորում, Ծակուտում, Առաքյուլում, Աղջաջաբեդում, Խծաբերդում, Տողում, Մեծ Թաղլարում։ Նրանք ստեղծում են կոոպերատիվներ, հիմնադրում են հայկական գործարանների մասնաճյուղեր, աշխատում են որպես ուսուցիչներ ու տնտեսագետներ, որպես բժիշկներ ու ինժեներներ։ Իսկական հայրենասիրությունը հենց սա է։

Թող դալար մնա բոլոր նրանց կուրը, ովքեր օգնում են շրջանի վերածնդի գործին։

Դու, սիրելի հայրենակից, ինչո՞ւ պետք է անմասն մնաս հայրենաշեն ու սուրբ այս գործից։ Ես գիտեմ, որ դժվար է տեղահանությունը, որ այն կապված է շատ անհարմարությունների, նյութական վնասների հետ, բայց թող որ մի քիչ ընդություն կրես, մի քիչ տանուլ տաս բարեկեցության հարցում, մի քիչ կորցնես աշխատավարձում, միայն թե դրանից շահի հայրենիքդ, միայն թե կործանումից փրկվի քո հայրական օջախը, միայն թե մոռացումից փրկվեն քո պապերի մամռապատ գերեզմանները։

Վերադարձիր, չես փոշմանի։ Քեզ կհիշեն Արցախի երախտապարտ սերունդները, քեզ կհիշի քո ժողովուրդը։ Եղիր նրա արժանի զավակը, ձգտիր անձնականդ զոհել հանուն հայրենյաց, ինչպես քո նախնիները Ավարայրում ու Սարդարապատում, ինչպես հայրենադարձ ժամանակակիցներդ, որոնցից շատերը թողնելով իրենց փարաշուք կյանքը Փարիզում և Ֆրեզնոյում, Հռոմում ու Լիբանանում, գալիս են «ավետյաց երկիր»՝ բավարարվելով ամենանվազագույնով։ Հիրավի, իսկական հայրենասերները ոչ մի բանի առջև կանգ չեն առնում։ Թե մի քիչ դու էլ խորը մտածես, կհավաքես իրերդ, կառնես ընտանիքդ և կվերադառնաս քո հայրենի գյուղը, որտեղ քեզ կդիմավորեն ուրախությամբ՝ աղ ու հացով։

Դե, ուրեմն, ի գործ, սիրելի հայրենակից։

Հադրութցիների անունից՝
Գրիշա ԲԱՂՅԱՆ
Կուսշրջկոմի առաջին քարտուղար

Ինչ է լինելու վերջը. խորհում են կյանքի թոհուբոհով անցած արցախցի այս ծերունիները...

Լուսանկարը՝ Ռ. Համբարձումյանի